ՄԻՔԱՅԵԼ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԳԱՊԵՏ ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՋՐՎԵԺ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(12 հուլիսի 1998)

Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

«Հանդերձք զոն քո, լեր մեր իշխան, եւ կերակուր մեր ընդ քեզ լիցի»:

«Դու վերարկու ունես, հանդերձներ ունես, արի՛, մեզ իշխան եղիր, և թող մեր կերակուրը քեզ հետ լինի» [և քեզանից լինի] (ԵՍԱՅԻ Գ 6):

Այսօր Աստվածաշունչ մատյանից վերցված Եսայի մարգարեի այս խոսքերը մեկ անգամ ևս հնչեցին մեր ականջներին Պողոս Առաքյալի՝ Հռոմեացիներին ուղղված նամակի և մեր Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանական հատվածի հետ միասին: Եվ ես որոշեցի որպես այսօրվա քարոզի բնաբան, նյութ և որպես դաս ու խրատ վերցնել Եսայի մարգարեի հենց ա՛յս տողերը, որոնք այսօր դարձյալ հնչեցին, ինչպես հնչել էին առաջին անգամ Հիսուս Քրիստոսից ավելի քան 700 տարի առաջ: Եվ ինչպես Քրիստոս ասաց, թե երկինքն ու երկիրն անցնելու են, բայց Աստծո խոսքերը չեն անցնելու, այնպես էլ Եսայի մարգարեի վերոհիշյալ խոսքերի միջոցով մեկ անգամ ևս հաստատվում և հավերժացվում է այն հավիտենական ճշմարտությունը, որ Աստվածային խոսքը երբեք չի հնանում, չի մաշվում, ինչպես մաշվում են մեր զգեստներն ու ձորձերը:

Եթե հետադարձ մի հայացք ձգենք պատմության խորքերը մեր Տեր Հիսուս Քրիստոսից 700 տարի առաջ, կտեսնենք, որ կար ընդամենը մեկ ժողովուրդ, որ միաստվածության գաղափարականն ուներ իր մեջ, և հասկացել էր, որ չեն կարող լինել ուրիշ աստվածներ, այլ միայն մեկ Աստված: Այդ հասկացել և ընդունել էր ոչ թե սեփական միջոցներով ու կարողությամբ, այլ՝ աստվածային շնորհով և աստվածային նախախնամությամբ՝ որպես Աստծո մեկ քայլը դեպի մարդկությունը, դեպի Իր ստեղծագործությունը: Այդպիսի մի ժողովրդի մեջ Եսայի մարգարեն, 700 տարի Քրիստոսից առաջ, իրեն բավարարված չի զգում որպես Աստծո պատգամաբեր և խոսնակ, չի բավարարվում այն վիճակով, որ այդ ժողովուրդն ունի մեկ Աստծո գաղափարը և գաղափարականը, այլ ցանկանում է այդ ժողովրդի մեջ տեսնել իրական Աստծո նկատմամբ պարկեշտ կեցվածք ու վերաբերմունք: Նա տեսնում է, որ իր ժամանակի հրեա ժողովուրդը, մեկ Աստծու գաղափարը դարձնելով իր սեփականը, իր գաղափարախոսության հիմքերից մեկը, չի նայում դեպի իրենից ներս, իր հոգուց, մտքից և սրտից ներս, այլ բավարարվում է միայն այն գիտակցությամբ, թե ինքը, մյուս բոլոր հեթանոսների հետ համեմատած, ավելի առաջավոր դիրքերում է, ավելի աստվածպաշտական դիրքերում է և, ավելին, ըստ իր հայեցակետի, ավելի մոտ է կանգնած Աստծուն:

Եսայի մարգարեն, տեսնելով մարդկանց հոգու և սրտի հեռացումը Աստծուց, դատապարտում է իր ժամանակի վարքն ու բարքը և ասում, որ եթե հրեա ժողովուրդը շարունակի մնալ աստվածճանաչության այս մակերեսային վիճակի վրա, շատ շուտով մեկը մյուսին՝ եղբայրը եղբորը, հայրը որդուն մոտենալու և ասելու է. «Դու վերարկու ունես, հանդերձներ ունես, այսինքն՝ մեծահարուստ ես,

արի՛, եղի՛ր մեզ իշխան, որպեսզի մեր կերակուրը դու հայթայթես»: Այսինքն՝ որպես չափանիշ է վերցնելու ոչ թե իշխանավորի կամ իշխանի՝ Աստծո նկատմամբ ունեցած կեցվածքը, դիրքորոշումը, իր աստվածահաճ վարքն ու բարքը, այլ իր ունեցվածքը, հարստությունը և, որպես ակնկալություն, ոչ թե աստվածային շնորհը, այլ կերակուրը՝ ժամանակի հետ կապված և ժամանակի հետ գնացող:

Եսայի մարգարեի այս առարկայական, իրական և իրապաշտական խոսքերին հաջորդում են աստվածային մյուս կանխատեսումները: Քանզի մարգարեն ասում է, որ եթե ժողովուրդը մոտենա իր կենցաղին ու կենցաղակերպին ա՛յս մտածումով և հայեցակետով, շատ շուտով մանուկներն են լինելու իշխանները և խաբեբաներն են լինելու իրենց տերերը: Իսկ երբ մանուկները լինեն իշխաններ ու խաբեբաները դառնան տերեր, այն ժամանակ կգա ժողովրդի կործանումը, այն ժամանակ այլևս մեծահարուստների ունեցվածքը, փողը, հանդերձները և կերակրի առատությունը չեն փրկի ժողովրդին: Կգա կործանումը, որովհետև ներքին, ոգու սովի առկայությունը ժողովրդին կտանի դեպի կործանում: Իշխաններն այլևս չեն մտածի ժողովրդի բարօրության մասին: Նրանք միայն հանապազօրյա հացը կտան ժողովրդին և, այդ քչով նրանց բավարարեցնելով, վերջիններիս հայացքը կհեռացնեն երկնքից: Եվ խաբեբաները, դառնալով ժողովրդի տերերը, իրենց ստով դեպի մոլորություն կտանեն մարդկանց և կպառակտեն ժողովրդին: Իսկ ժողովուրդը չի կարողանա միասնական ճակատով հանդես գալ բազմաստվածության այն հեթանոսական աշխարհի դեմ, որի առջև կոչված էր վկայելու մեկ և ճշմարիտ Աստծուն:

Եսայի մարգարեի այս խոսքերը, ինչպես ասացի, հնչել և իրականացել են ավելի քան երկու հազար վեց հարյուր տարիներ առաջ, որովհետև իրապես հրեա ժողովուրդը չկարողացավ հոգով ու մտքով մոտենալ Աստծուն, այլ միայն մարմնով մերձեցավ և, որպես դրա հատուցում, իր իշխաններն ու տերերը իրեն լքեցին: Ինքը դարձավ օտար երկրների և թշնամի ազգերի գերի, ենթարկվեց ասպատակությունների:

Այսօր, երկու հազար վեց հարյուր տարի հետո, մենք մեկ անգամ ևս վերընթերցեցինք Եսայու խոսքերը: Շատերիս համար թերևս դրանք մնացին որպես պատմության մի արձանագրություն: Շատ հաճախ մենք մատենագիրներին նույնպես ընթերցում ենք և ընթերցում ենք որպես պատմական իրադարձությունների մի շարադրանք, որ այս փաստը տեղի է ունեցել այսինչ կամ այնինչ թվականին: Սակայն այդ փաստի շարադրմամբ ու մանավանդ այդ փաստի շարադրման հետևում թաքնված աստվածային նախախնամության լույսի տակ չենք կարողանում կողմնորոշել, կանխորոշել մեր ընթացքն ու ճանապարհը: Այսօր մենք, որպես հայ ժողովուրդ, որպես հայ մարդիկ, երբ կարդում ենք Եսայու այս սպառնալիքը, արդյոք այդ խոսքերը մեզ ուղղված չե՞նք զգում, արդյոք մենք որպես հայեր, որպես հայ քրիստոնյաներ, որ հպարտանում և պատեհ կամ անպատեհ առիթով հայտարարում ենք, թե առաջին քրիստոնյա ազգն ենք, այսօր արդյոք հոգով, մտքով ու ճշմարտությամբ երկրպագո՞ւմ ենք այն Աստծուն, Ում մեր հայրերն ընդունեցին 1700 տարի առաջ: Երբ պահը գալիս է մեր իշխաններին, մեր տերերին ընտրելու, արդյոք չե՞նք նայում նրանց հարստությանը, դիրքին, ունեցվածքին, սրա կամ նրա բարեկամ լինելու հանգամանքին և, նամանավանդ, որպես ակնկալություն, այն փաստին, թե նա մեզ տալու է օրվա

հացը՝ որպես կերակուր, այսինքն՝ հոգալու է մեր մարմնական, զուտ ստամոքսային կարիքները:

Վերջին այս մի քանի տարիների ընթացքում արդյոք մենք որպես ժողովուրդ այս զգացումով չմոտեցա՞նք, արդյոք երբևիցե անդրադարձա՞նք մեր արածին, երբ ընտրեցինք մեր իշխանին ու տիրոջը այնպիսի մի մարդու, ով ոչ թե հարստությամբ, դիրքով, բարեկամների առատությամբ, տված խոստումներով ու ակնկալիքներով մեզ գրավեր, այլ՝ Աստծո նկատմամբ իր կեցվածքով, Աստծո նկատմամբ իր պաշտամունքով, Եկեղեցու նկատմամբ իր ակնածանքով և հարգանքով, Սուրբ Սկիհի և Սուրբ Հաղորդության նկատմամբ մեծ երկյուղածությամբ, մոտենալով ու հաղորդվելով Քրիստոսի ճմարիտ Մարմնին և Արյանը:

Մենք, երբ մոտենում ենք իրականությանը ա՛յս տեսակետից, Եսայի մարգարեի խոսքերի ա՛յս լույսի տակ, տեսնում ենք, որ մարգարեի խոսքերն այսօր ուղղված են նաև մեզ: Ուղղված են նաև մեզ, որովհետև մենք նույնպես մեր շրջապատում իշխաններ և տերեր ենք ուզում տեսնել նրանց, ովքեր հարուստ են և կարող են մեզ առօրյա հացով, սոսկ կերակրով ապահովել, անտեսում ենք մարգարեական այն կանխատեսումը, որ եթե այդպես մոտենանք մեր կյանքին ու կենցաղին՝ մանուկներն են լինելու մեր իշխանները և խաբեբաներն են դառնալու մեր տերերը:

Այստեղ մեկ անգամ ևս, առօրյա կյանքում տեսնում ենք, որ շատ հաճախ մեր գլխին որպես տեր և իշխան ենք կարգել խաբեբաներին ու մանուկներին: Եվ քանի դեռ կշարունակենք այս մոտեցումը և չենք քննի մարդկանց կեցվածքն Աստծո ու Եկեղեցու հանդեպ, երբեք չեն ցամաքի մեր շուրթերից դժգոհության խոսքերը, չենք դադարի դժգոհել, բամբասել, ամենուր պատեհ կամ անպատեհ առիթով մեր վրդովմունքը հայտնել իշխանությունների, այսօրվա տերերի նկատմամբ: Այսօրվա այն իշխաններն ու տերերը, ովքեր մանուկ են կամ խաբեբա, Պողոս Առաքյալի խոսքով (Հռոմ. ԺԱ 18), կարծելու են, թե իրենք, որ ճյուղերն են ծառի, արմատ են պահում, այլ ոչ թե արմատն է պահում իրենց: Մինչդեռ, և՛ իրականության մեջ, և՛ փոխաբերական իմաստով, վստահ ու համոզված ենք, որ արմատն է պահում բունը, իսկ բունը՝ ճյուղերը: Մենք՝ բոլորս, լինենք իշխանավոր կամ առանց իշխանության, ճյուղերն ենք միևնույն ծառի, որ կոչվում է ազգ, և այդ ազգը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ Եկեղեցի, որովհետև մեր ազգն ամբողջովին և ամբողջության մեջ 1700 տարի առաջ դարձավ Եկեղեցի, երբ միասնաբար, որպես մեկ միտք և մեկ հոգի, մկրտվեց Քրիստոսի ավազանում և հավատաց ու ազգովին դարձավ այն միասնությունը, այն հավաքականությունը, որը Սուրբ Սկիհի շուրջ ուրիշ բան չենք անվանում, եթե ոչ՝ Եկեղեցի:

Այսօր որևէ մեկս, որ ճյուղերն ենք այդ ծառի և այդ արմատից ենք սնվում, որ է քրիստոնեությունը և Քրիստոնեական Եկեղեցին, երբեք իրավունք չունենք պարծենալու, մտածելու և ամբարտավան մոտեցումով կարծելու, թե մենք ենք պահում արմատը, մենք՝ այսօրվա ճյուղերս ենք սնում և սնուցում արմատը: Պողոս Առաքյալի խոսքերի համաձայն, Աստված է տալիս այդ սնունդը արմատից դեպի ճյուղերը: Նա կարող է կտրել այն ճյուղը, որը գոսացած է և հետո նույն տեղում պատվաստել այնպիսի մի ճյուղ, որն ավելի ապագա է խոստանում այս հսկա աշխարհի պարտիզպանին, որ ոչ այլ ոք է, եթե ոչ Աստված:

Ուրեմն, սիրելի՛ եղբայրներ և քույրեր, երբ վերընթերցում ենք Աստվածաշունչ Մատյանը, լինի Նոր Կտակարանը կամ Հին Կտակարանը, լինեն դրանք մեզանից

հեռու-հեռավոր հազարամյակներ առաջ արտասանված խոսքեր, որոնք իրենց մեջ Աստծո շունչն են պարունակում, կամ լինեն մեզ մոտիկ Սուրբերի կամ Եկեղեցու Հայրերի կողմից արտասանված խոսքեր, դրանք վերընթերցելիս պետք է միշտ այդ տողերին նայենք ու մոտենանք մեր այսօրվա կյանքի և իրականության տեսանկյունից, համեմատենք այն ժամանակվա արտասանված խոսքերի ճշմարտացիությունն այսօրվա իրականության հետ: Եկեք համեմատենք ու կտեսնենք, որ թերևս աստվածային շատ խոսքեր այսօր ավելի, քան երբևիցե, մեզ են ուղղված: Մենք կարող ենք սրբագրել մեր բոլոր այն սխալները, որոնք թույլ ենք տվել այս տարիների ընթացքում, որպեսզի ապագայում նման սխալներ թույլ չտանք, որպեսզի Աստված մեզ օրհնի որպես ժողովուրդ, որպես ազգ և որպես Եկեղեցի, որպեսզի մենք կարողանանք Աստծո առաջ ճշմարտապես, քրիստոնեավայել կեցվածքով հանդես գալ, չհպարտանալ Աստծո առաջ նաև մեր ունեցած-չունեցածով, որը դարձյալ ուրիշ բանի արդյունք չէ, եթե ոչ Աստվածային օրհնության և Աստվածային շնորհի: Աստված Պողոս Առաքյալի խոսքերով մեզ օրհնելու է, մեզ պատվաստելու է իրոք ա՛յն ծառին, որը երբեք չի չորանալու: Իսկ այդ ծառն այն Հաղորդությունն է, որ մենք Քրիստոսով ստացել ենք, Քրիստոսով շարունակում և շարունակելու ենք ստանալ հազարամյակներ, մինչև Քրիստոսի վերջնական գալուստը:

Մենք, որպես փոքրիկ հոտ, որպես ժողովրդի մի փոքրիկ մասնիկ, պետք է ունենանք այդ գիտակցությունը և այդ պատասխանատվությունը՝ մեզ վրա վերցնելու այն բեռը, այն քաղցր լուծը, որ մեզ տրվել է Աստծո և Իր Միածին Որդու միջոցով: Երբ զգանք այդ լուծը և հասկանանք, որ այն, որքան էլ ծանր, բայց քաղցր է, այն ժամանակ կկարողանանք մեր ազգի հարցերը լուծել իրատես նայվածքով, Աստծո շնորհով և Աստծո նախախնամության մեջ: Այն ժամանակ մեր լեզվից, մեր բերանից այլևս դժգոհության խոսքեր չեն հնչի, այլ՝ օրհնության խոսքեր, որոնցով կօրհնենք Աստծուն՝ ամեն ինչի Արարչին, կօրհնենք մեր եղբայրներին ու քույրերին, ովքեր բազմապատկում են Աստծո արարչագործության պտուղները այս աշխարհում: Եվ ահա այն ժամանակ Աստված Իր շնորհը, օրհնությունը և սերն անխտիր կտարածի մեզանից յուրաքանչյուրի վրա այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն: